

Հազար և վեց հարիւր ութսունեութեան,

Վկայ բանիս Աստուած՝ զի է անվախճան»:

Աստուածաշունչիս տէրը եղած է Ալէքսիանոս կամ Ալէքսան «կապակար կամ դերձակ», մականուանեալ Նիշաստաճի, որ զայն կը նուիրէ իր Հուրմուզ Դպիր անուն որդւոյն, ինչպէս կ'իմանանք ոտանաւորիս Յրդ և Յրդ տուներէն:

«Տառիս շնչոյ յաստուածայնոյ յոյժ ցանկացեալ,
Որոյ անունն Ալէքսիանոս անուանեալ,
է արուեստիւն կապակար կամ դերձակ լեալ,
Եւ մականուամբ Նիշաստաճի վերածայնեալ:

Արդ զգիրքս զայս Աստուածաշունչ որ կոչեցեալ,
Որդոյ իւրում Հուրմուզ Դպրին է շնորհեալ,
Որպէս հիյպէ հայրենատուր սմա բաշխեալ,
Եւ յիշատակ անջնջելի առ սա մնացեալ»:

9. ԹՂ. 100բ - 101բ. Ուղերձ Կիւլեազ Շոօօթցիի առ Ասուածասուր Ալլահվերսի եւ առ Ապսի, բաղկացեալ ինը տուներէ, որոնց սկզբնատառերը կը յօդեն՝ ի ԿիւլէԱջի:

Սկիզբը՝ «Ի ժամանել տրակին ողջունի,

Ձեր սըրբութեանց գերարգելի»:

Դրդ տունը՝ «Ասուածասուր Ալլահվերսի,

Չքնաղապանծ և փառազարդի,

Միւսըդ Ապսի տիպըդ տենչալի,

Անուանակից սուրբ մարգարէի»:

Վերջը՝ «Է իմ աղերս առ Մինըն բարի,

Ձի շնորհք նորին ձեզ պարգեւեսցի»:

Ուղերձիս կցուած է տասը տողերով ոտանաւոր մը,
«Շարաբանեալ գիրս չարազրական» սկզբնաւորութեամբ: Տողերուն սկզբնատառերը կը յօդեն՝ ՇՕՌՕ-ԹԵՑԻՌՅ: Ամենէն վերջը Տէր Կոմիտասի ստորագրութիւնը, «Նւստ Կմիտս երիցւէ շինեալ եղև, 1700»: